

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԻՆՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻՒ 5

ՕԳՈՍՏՈՍ 2002

bozdig_mozdig@hotmail.com

ԱԾԽԱՐԻՒ ԾՈՒՐԸ

Աշխարհի շուրջ ճամբորդություն մը կատարելու համար «Պպտիկ-Մպտիկ» պետք է գիտնայ վանազան լեզուներ: Դժուար պարտականություն մը... Սակայն, սկսելու համար, ահա հիմնական երեք բառեր, որոնց ամենէն շատ պետք պիտի ունենայ ան. բարե՛ւ, մա՛ք բարով, շնորհակալութի՛ւն (տեսնել՝ «Պպտիկ-Մպտիկ»ի նկարները էջ 1 եւ 8):

Սակայն եթէ լեզուներու գիտությունը ձեռք կը հետաքրքրէ, շատ հարուստ հասցէ մը գոյություն ունի համապատասխան վրայ: Գիտէ՞ր, թէ աշխարհի վրայ գոյություն ունին աւելի քան 2,796 լեզուներ, եւ թէ դուն կրնաս «բարեւ» ըսել աւելի քան 5,720,000,000 անձերու:

The Say Hello to the World Project
<http://ipl.ei.umich.edu/div/kidspace/hello/>

Լեզուներու կողքին, այս կայքին մէջ պիտի գտնէք նաեւ տեղեկութիւններ ձեր փափաքած երկրին, մշակոյթին եւ պատմութեան մասին:

ՃԱՄԲՈՐՈՂՈՒԹԻՒՆ

Վենետիկցի Մարքո Փոլո 731 տարիներ առաջ, 1271ին, որոշեց ճամբորդութիւն կատարել: Ան նախ նաւով կտրեց ծովը, ապա չորս տարի ցամաքի ճամբով վանազան երկիրներ պտտելէ ետք հասաւ Չինաստան: Ան նաեւ անցաւ հայկական Բարձրաւանդակէն:

Անգամ մը, երբ ճամբորդութեան մասին կը մտածէի, ես ինձի հարցուցի. «Ինչո՞ւ Մարքո Փոլոն 1200ական թուականներուն, երբ ճամբորդութեան դիրտութիւն չկար, իր հանգիստ կեանքը ձգելով, տարբեր երկիրներէ անցնելով գնաց մինչեւ Չինաստան գնաց»:

Երկար մտածելէ ետք ես ինձի գտայ համոզիչ պատասխան մը. «Քանի որ ան կը սիրէր նոր տեղեր յայտնաբերել, ճանօթանալ այլ ժողովուրդներու եւ անոնց սովորութիւններուն, տեսնել անոնց շինած գործիքները, կառոյցները, բաղադատել իր երկրին կլիման, կենդանիներն ու բոյսերը ուրիշներու հետ: Այսինքն, մէկ խօսքով, նորութիւններ սորվիլ»:

Ուրեմն ճամբորդութիւնը սորվիլ է: Կ'ըսեն, որ այն անձը, որ շատ ճամբորդած է, շատ գիտելիքներ ունի, կարծես համալսարան գացած ըլլայ: Ան ճամբորդութեան ընթացքին սորված կ'ըլլայ աշխարհագրութիւն, տարբեր ժողովուրդներու լեզուներ, առանց շփոթելու կրնայ գործածել այդ երկիրներուն դրամանիշերը:

Անցեալները կեդրոնական Պէրուի շուկաները այցելելիք: Բնակայ պատահներու վրայ ցուցադրուած լուսանկարները դիտելիք եւ հիացայ: Ինչ մեծ եւ միաժամանակ փոքր է աշխարհը, չորս կողմս էին երկրագունդին գրեթէ բոլոր երկիրները: Լուսանկարիչ Եանն Արթիս Պերթանտ այցելած է աշխարհի ամենէն գեղեցիկ, ինչպէս նաեւ ամենէն աղքատ ու խճող-



ուած վայրերը եւ վանոնք յաւերժացուցած է լուսանկարներու մէջ: Նկարները դիտելով՝ ես փս պատկերացուցի այդ երկիրներուն մէջ: Քարի նախանձ մղուած՝ տեղւոյն վրայ որոշեցի դրամ խնայել եւ ամէն տարի ամրան արձակուրդին Եանն Արթիս Պերթանտի այցելած երկիրները տեսնել եւ հաւանաբար «Պպտիկ-Մպտիկ»ին մէջ յօդուածներ գրել անոնց մասին: Սակայն փոքր դժուարություն մը ունէի. աշխարհագրութիւն լաւ չգիտնալու պատճառով երկիրներուն տեղերը չէի գիտեր: Քայց այդ մէկն ալ փարատեցաւ, երբ քանի մը քայլ անդին գետին փռուած տեսայ երկրագունդին հսկայ քարտէսը, որուն վրայ վետեղուած էին լուսանկարները համապատասխան երկիրներուն տեղ: Բոպիկ ոտքով պտըտեցայ այդ հսկայ քարտէսին վրայ, եւ որոշեցի յառաջիկայ տարի օդանաւով եւ կօշիկով պտըտիլ նախ Իսլանտա:

Սակայն ճամբորդել չի նշանակեր այցելել միայն անձանօթ երկիրներ: Մենք դպրոցներու մէջ կը սորվինք պատմութիւն եւ աշխարհագրութիւն. հաւանա-


(Ճարունակութիւնը՝ էջ 7)

ملحق أزياءك





ԱՃԽԱՐԻՆ ՃՈՒՐՋ



Պատկ-Ապտիկը ամրան արձակուրդին ճամբորդեց եւ այցելեց հետաքրքրական երկիրներ, ճանօթացաւ տարբեր ժողովուրդներու եւ սովորութիւններու: Բարեբախտաբար ան օրագիր պահելու սովորութիւն ունի եւ համաձայնեցաւ ամսաթերթին ճամբով մեր ընթերցողներն ալ ճանօթացնել իր այցելած երկիրներուն: Լաւ գաղափար է, չէ: Երանի դուք ալ նոյնը ընէ՞ք, այսինքն օրագիր պահէք, երբ կը ճամբորդէք կամ կ'այցելէք կիբանանի տեսարժան վայրերը: Ահա թէ ինչ կը պատմէ Պատկ-Ապտիկ: - Ապտիկ:

Այսօր հասայ Ամսթերտամ՝ հոլանտայի մայրաքաղաքը: Կը կարճէի, որ այս երկիրը պաշտօնապէս հոլանտա կը կոչուի: Զարմացայ, որ անոր անունը Նետերլանտի թագաւորութիւն է: Բացարկեցին, որ հոլանտա այս շրջանին մէջ նահանգ մը եղած է եւ սկսած է օգտագործուիլ իբրեւ երկրին անունը միջնադարուն:


հոլանտա թէեւ փոքր երկիր է, սակայն նշանաւոր է իր հողմաղացներով, տախտակէ կօշիկներով (սապօ), փառատօներով, թանգարաններով եւ հետաքրքրական այլ վայրերով:

Կարելի չէ խօսիլ հոլանտայի մասին եւ չիշել նշանաւոր գծագրիչներ վան Կոկը, Բամպրանթը եւ Մոնտրիանը:


Ես հեծիկ քշել շատ կը սիրեմ, եւ այս երկիրը յարմար է, որովհետեւ մեծ տարածութիւններ յատկացուած են հեծիկ քշելու: Պայճառ օրերուն կակաչի նշանաւոր պարտէզներուն մէջէն անցնելով հեծիկ կը քշէի: Սակայն իմ ըրած սխալս չընէ՞ք եւ յանկարճ տախտակէ կօշիկներով քշէ՞ք հեծիկը. յետոյ ինձի պէս կ'իյնաք: Միայն Ամսթերտամի մէջ կան 550 կամուրջներ: Նշանաւոր է «Լայոդներու աշտարակը» 17-18րդ դարերուն դէպի «Նոր աշխարհ» ճամբորդողները այստեղէն կը բաժնուէին իրենց ընտանիքներէն:

Ճատ բան կայ ըսելիք, սակայն տեղ կ'ուզեմ պահել միւս այցելութիւններուս համար:


3. 9. Մոռցայ ըսելու, որ հոլանտայի կարգ մը շրջանները ճովուն մակերեսէն աւելի ցած են:



Տախտակէ կօշիկներս



Քէպէք նահանգի ինքնաշարժներուն թիւերուն տախտակները:



Նիակարա անունը եկած է իրոքուա հնդիկներու «օսկիա-ահրա» բառէն

Յուլիսի կիսուն Ամսթերտամէն մեկնեցայ Քանատա: Թէեւ մայրաքաղաքը Օթաուան է, սակայն ես ուզեցի երթալ Մոնրէալ, որ կը գտնուի Քեպէք նահանգին մէջ: Քանատա ունի հսկայ տարածութիւն, որ բաժնուած է բազմաթիւ նահանգներու: Քանատայի պաշտօնական ներկայացուցիչը Անգլիոյ թագաւորական տունն է, սակայն գործնականօրէն երկիրը կը կառավարուի խորհրդարանով եւ վարչապետով:

հետաքրքրական խառնուրդ է Քանատայի բնակչութիւնը: Բնիկ ժողովուրդը ինուիթներն են՝ մեր գիտցած էսկիմոները:

Դարերու ընթացքին Քանատայի բնակիչները եկած են Ֆրանսայէն, Սկոտիայէն, Իրլանտայէն, իսկ ուրիշներ ամերիկեան յեղափոխութեան ընթացքին Ամերիկայի գաղութներէն: 1900ական թուականներուն Քանատա հասած են այլ ժողովուրդներ՝ չինացիներ, ուքրանացիներ եւ հայեր:

Քանատայի մէջ կան նշանաւոր եւ հետաքրքրական վայրեր: Բոլորը չեմ կրնար յիշել, սակայն կարելի չէ մոռնալ Նիակարայի ջրվէժին մեծութիւնը: Քանի որ չեմ կրնար բոլոր տեսած վայրերու մասին խօսիլ, կը նախընտրեմ կեդրոնանալ Մոնրէալի վրայ:

Մոնրէալ քաղաքը շինուած է Մաունթ Ռոյլի շուրջ: Մոնրէալը 1844ին Քանատայի մայրաքաղաքը եղած է, սակայն 1849ին, ֆրանսացիներու եւ անգլիացիներու միջեւ բաւական խնդիրներ ետք, մայրաքաղաքը փոխուած է:

հա՛, չմոռնամ. նշանաւոր գետը Ս. Լորանսն է, իսկ թղկի (մէլփըլ) ճաբին տերեւը Քանատայի խորհրդանիշն է:

յո
Ապտիկ - Տպտիկ

Մոնրեալէն ուղղուեցայ դէպի Պրազիլ: Բազմաթիւ մարդիկ շատ կը սիրեն այս երկիրը իր ֆուտբոլի խումբին պատճառով:


1500ական թուականներուն Պրազիլի մէջ կ'ապրէին հնդիկներ, որոնց վրայ եկան աւելնալու յատկապէս փորթուգալիներ, ինչպէս նաեւ՝ ֆրանսացիներ, հոլանտացիներ անգլիացիներ եւ վերջապէս՝ ափրիկեցի գերիներ: Այս բոլորին խառնուրդով յառաջ եկաւ պրազիլցին:

Լատինամերիկեան բոլոր երկիրներուն մէջ Պրազիլ իւրայատուկ է, որովհետեւ հարաւային Ամերիկայի բոլոր երկիրները սպանական ազդեցութիւն ունին, իսկ Պրազիլի մէջ մար-

դիկ կը խօսին փորթուգալերէն:

Երբ Պրազիլ հասայ, ամառ էր, հետեւաբար չկրցայ ներկայ գտնուիլ Ռիօ Տէ Ժանէրոյի բարեկենդանին, որուն ընթացքին սամպա պարի վանական դպրոցները իրարու հետ կը մրցին: Անոնք գունաւոր տարապնորով կը ներկայացնեն իրենց սորված պարերը:

Անշուշտ կարելի չէ մոռնալ Ամալոնի հրաշալի անտառները: Սակայն որոշած եմ օր մը անպայման հոն երթալ եւ յատկապէս անոր մասին գրել ձեզի:



Pão de Açúcar, «Ճաքարէ հայր», տարօրինակ անուն մը բլուրի մը համար

2.08.02



11.08.02

ժամանակն է որ ուղղուիմ Աւստրալիա: Կրնաք երեւակայել, որ մինչեւ այսօր չէի գիտեր, որ Աւստրալիոյ մայրաքաղաքը Քանպերան է:

Աւստրալիան տարօրինակ կլիմայ մը ունի: Անոր հիւսիսը շատ տաք է, հարաւը՝ բարեխառն, իսկ Արեւելեան լեռները՝ շատ պաղ: Աւստրալիոյ «Կարմիր շրջանը» անապատային տաք շրջան է: Ձմեռը Յունիսէն Օգոստոս ամիսներուն կ'ըլլայ:

հետաքրքրական են Աւստրալիոյ անասունները: հոն կան 40 տեսակի ագնիւլներ, քո-

լան, որ իր ժամանակին մեծ մասը քնանալով կ'անցընէ: Կան նաեւ տարօրինակ ստնաւորներ, որոնք հաւկիթ ածելով կ'անցընեն:

Աւստրալիոյ հիւսիսարեւելեան ճովափին կայ...ճովուն տակ գտնուող հրաշալի պարտէլ մը: Ձայն կարելի է դիտել սուլելով կամ պարպապէս նաւակի մը մէջէն վար նայելով: Անոնք կը կոչուին քորալի պարտէլներ եւ կը «ճաղկին» շուրջ տասը հազար տարիէ ի վեր: Իսկ քորալը կազմուած է 300 տարբեր տեսակի ճովային կենդանիներու արտադրած հիւթերէն:

Աւստրալիոյ մէջ տիծերիտու նուագիչի

հիմա հնդկաստան եմ, Թաժ Մահալին առջեւ: Մի հարցնէք, թէ ինչպէս հասայ այստեղ, բայց շատ յոգնեցայ:


Չորս կողմս շատ խճողուած է: Աշխարհի բնակչութեան 1/6ը այստեղ կ'ապրի:

հնդկաստան հինի եւ նորի խառնուրդ է: Ինքնաշարժներուն կողքին կը տեսնէք ջորիով կառքեր եւ փիղեր: Կարճեմ պատկերը յստակ է:


Աշխարհի ամէնէն բարձր լեռնաշղթան՝ հիմալայեան, կը գտնուի հնդկաստանի հիւսիսը: Անոր 146 գագաթներէն աւելի քան քառասունը 7600 մետրէն աւելի բարձր են:

հնդկաստանի պարագային ամէնէն նշանաւոր շինութիւնը Թաժ Մահալն է, որ շինուած է 17րդ դարուն մոնկոլ արքայ Ծահ ժահանի կողմէ: Ան այս դամբարանը շինել տուած է իր կնոջ համար: Անոր շինութիւնը տեւած է 22 տարի:

հնդկաստանի մէջ ցաւալի երեւոյթ մը կայ. ժողովուրդին մեծամասնութիւնը կ'ապրի շատ աղքատ վիճակի մէջ: Արդեօք ինչ կրնանք ընել անոնց օգնելու համար:



2.08.02



Թաժ Մահալ



11.08.02

Քենիոյ մէջ հանդիպեցայ հետաքրքրական բնիկներու:

Պիտի չհաւատաք, թէ ուր եմ: Փորձեցէք գիտնալ... Քենիա կը գտնուիմ: Գիտէք, թէ ուրկէ՞ եկած է Քենիա անունը. նշանաւոր Քենիա լեռնէն: Քենիա կը գտնուի Արեւելեան Ափրիկէի մէջ: հակառակ անոր, որ հասարակածի վրայ կը գտնուի, ունի տարբեր կլիմաներ:

Տարօրինակ քաղաք է Քենիոյ մայրաքաղաք Նայրոպին: Ան ունի աշխարհի լաւագոյն կլիմաներէն մէկը: 1650 մետր բարձրութեան վրայ է: Տերեկը տաք կ'ըլլայ.

իսկ գիշերը՝ պաղ: Ուրեմն, պէտք է լաւ ճածկուիք երբ հոն կը գիշերէք:

Քենիոյ պօսայգիներուն մէջ կարելի է տեսնել փիղ, վագերաճի, ջայլամ եւ այլ անասուններ: Քենիոյ պաշտօնական լեզուն սուահիլի կը կոչուի: Ան խառնուրդ է պանթու եւ արաբերէն լեզուներուն, որ ունի նաեւ անգլերէն եւ փորթուգալերէն բառեր:

Բարեկէ բարեկէ
1984-54819



ՍԷՆԻ ԳԵՏԱՓՈՐ
ԿՐ ՎԵՐԱԾՈՐԻ
«ԾՈՎԱՓ»Ի



Սէնի հիւսիսային ափը մօտաւորապէս մէկ ամսուան համար վերածուած է «ճովափ»ի:

Ծրագիրը, որ մօտաւորապէս 1,5 միլիոն եւրօ արժաւ է, աւազով, արմաւի ճառերով, արուեստական խոտով եւ այլ յարմարութիւններով օժտած է գետը: Բիւնական նպատակը Օգոստոս ամսուան ընթացքին Փարիզ մնացող քաղաքացիները եւ նաեւ վրասաշրջիկները ուրախ պահելն ու վրադեցնելն է:

Այս առիթով կազմակերպուած են մարտական խաղեր. «ճովափ»ը օժտուած է սրճարաններով, իսկ գիշերները ծոխ են երաժշտական հանդեսներով:

«Ծովափ»ին միակ անպատեհութիւնը այն է, որ զուարճացողները չեն կրնար զովանալ Սէնի ջուրերուն մէջ:

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ bezdig_mezdig@hotmail.com կամ յանձնել՝ «ՊՁՅԻՎ-ԱՅՅԻՎ»-ի խմբագրութեան, «ԱՅԼԱԶԱՆ» «Ճաղկոյեան» կեդրոն:

ՓԻՋԱՅԻ ԱԾՏԱՐԱԿԸ ԱՅՅԵԼՈՒՆԵՐ Կ'ԸՆԴՊՈՒՆԻ

11 տարի եւ 11 ամիս նորոգութեան աշխատանքներէ ետք, Իտալիոյ Փիզայի աշտարակը վրասաշրջիկներու առջեւ բացաւ իր դռները Դեկտեմբեր 2001ին: Իսկ այս տարուան մայիս, Յունիս, Յուլիս ամիսներուն կարելի պիտի ըլլայ աշտարակ գիշերով այցելել:

Փիզայի աշտարակը, տաճարի մը վանճակատունն է: Անոր շինութիւնը սկսած է 1173ին, ընդմիջումներով տեւած է 200 տարի: Աշտարակը շինուած օրէն սկսած էր թեքիլ, նորոգութիւնները եւ ամրացումի աշխատանքները յաջողած են որոշ



չափով նուազեցնել թեքումը նելու համար 293 սանդուխտ պէտք է բարձրանալ: Աշտարակին զագաթը հաս-

ԲՈՆԿ ԲՈՆԿԻ

ՋԵՊՉ - ՎԱՃԱՌՔՆԵՐԸ



Չինական այս քաղաքին մէջ 15 Յունիսէն մինչեւ 31 Օգոստոս տեղի պիտի ունենան անհաւատալի վեղչ-վաճառքներ: Գիները պիտի նուազին աւելի քան 80 առ հարիւրով՝ տարբեր տեսակի վաճառանիշներու, հագուստներու եւ վարդեղէններու վրայ:

Այս քայլին միջոցով, Բոնկ Բոնկ կ'ուզէ փոխել քաղաքին «առեւտուրի քաղաք» դիմագիծը: Այս առիթով պիտի կազմակերպուին նաեւ վանապան ներկայացումներ եւ երգահանդեսներ:

Բետեաբար, եթէ կը փափաքիք վերջին վայրկեանին ծամբորդութիւն մը ընել, ունիք տակաւին քանի մը օր՝ ուղղուելու համար դէպի Բոնկ Բոնկ:

ԿՐՆԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՑՈՒՑԱՌԱՆԴԷՍՆԵՐ

Աշխարհի տարբեր երկիրներու մէջ թանգարանները այս ամառ կը կազմակերպեն կիներու նուիրուած յատուկ ցուցահանդեսներ:

Փոքահանթաւն սկսեալ մինչեւ մարլին մոնթրօ, հարիւրաւոր կիներու նուիրուած այս ցուցահանդեսները կը փորձեն շեշտել պատմութեան մէջ կիներուն խաղապատ դերը:

ՍԻՏՆԻՆ՝ ԱԾՏԱՐԱԿԻ
ԱՄԷՆԷՆ ԼԱՒ ԲԱՊԱՐԸ

Վերջերս «Սի. էն. էն.» հեռատեսիլի կայանը աշխարհի տարածքին վրասաշրջիկներու հարցուցած է, թէ որն է ամէնէն լաւ քաղաքը:



Պարզուած է, որ վրասաշրջիկներու կողմէ աշխարհի ամէնէն լաւ քաղաքը կը նկատուի Աւստրալիոյ Սիտնի քաղաքը: Անոնց այս կարծիքին մէջ մեծ դեր խաղապատ է Սիտնիի շատ գեղեցիկ ճովեպերեայ դիրքը եւ նաւահանգիստը: Այս քաղաքին մէջ վրասաշրջիկները շատ լաւ ձեւով կրնան թէ՛ բնութիւնը վայելել եւ թէ՛ մշակութային պահեր ապրիլ:

ԻՏԱԼԱՅԻ ՉԱՐԱԾԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Գիտէ՞ք, թէ մանուկներու վարուելակերպը կարելոր է ոչ միայն դպրոցական օրերուն, այլ նաեւ՝ արձակուրդին: Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, որ արձակուրդի օրերուն աշխարհի ամէնէն անհանդարտ երեխաները հատալապիներն են, որոնք նեղութիւն կը պատճառեն իրենց շրջապատին: Անոնց կը յաջորդեն ֆրանսացի եւ սպանացի երեխաները:

Իսկ ամէնէն հանդարտ երեխաները ամերիկացիներն են: Այս չարածի երեխաները արձակուրդի ընթացքին օղանաւերուն մէջ կը վազվզեն եւ կ'աղմկեն, պանդկներուն մէջ ուրիշներու հանգիստը կը խանգարեն եւ աւազ ու ջուր կը թափեն ճովափը հանգրստացողներուն վրայ: Ուրեմն՝ քաղաքավար ըլլանք նաեւ արձակուրդին:



ՊՐԻՅՆԻ ՍՓՈՐՁ՝ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԵՋ



Օգոստոսի սկիզբը Պրիյնի Սփիրյ Մեքսիթոյի մէջ իր շրջապատոյտին ընթացքին նեղացուց իր համակիրները:

Ան ... կէս ժամ իր ելոյթը: Բամերգին հինգերորդ երգին ընթացքին ան հանդիսատեսներէն ներողութիւն խնդրեց եւ բեմէն հեռացաւ: Բետագային Պրիյնի Սփիրյ

յայտարարեց, որ վեց ամսուան համար արձակուրդ մը պիտի առնէ:

...

ԹՈՊԻ ՄԱԿՈՒԱՅԵՐ՝ ՆՈՐ ԺԱՊԱՒԷՆԻ ՄԵՋ

Եթէ սիրեցիք «Սփայտըր մէն»-ի հերոս Թոպի Մակուայը, ապա պատրաստուեցէք անոր նոր ժապաւէնին, որուն աշխատանքները պիտի սկսին Բոկտեմբերի կիսուն: «Սփիրիթ» խորագիրով այս ժապաւէնին մէջ նաեւ դեր պիտի ստանձնէ Մէլ Կիպսըն:

...

ՄԵՏԱՅԱ ԹՈՊԻ

ԽՈՒՅՈՒՆԱԿԱՆՆԵՐՆԵՐ

Ձեզմէ անոնք, որոնք կը սիրեն երգչուհի Մըրայա Բեքին, թող ուրախանան: Վերջին քանի մը ամիսներուն հրապարակէն քաջուած



եւ ձախողութիւններ ունեցած երգչուհին արդէն իսկ կը պատրաստէ նոր երգեր, որոնք լոյս պիտի տեսնեն Դեկտեմբերին: Ան նոր համաձայնութիւններ կնքած է «Տէք Ժէմ» խումբին հետ եւ պատրաստ է արձանագրելու նոր յաջողութիւններ:

...

ՃՈՐՃ ՄԱՅՔԵԼ Կ՛ՈՒՔԷ ԵՐԳԵԼ 2004Ի ՈՂԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՆԵՐ

«Ճուլ» տը տակ» անունով իր վերջին երգը Միայեալ Նահանգներու մէջ տարբեր ձեւերով ընդունուելէ ետք, ամերիկացի երգիչ Ճորճ Մայքըլ կը ճրագրէ անցնիլ յաջորդ երգի պատրաստութեան, որ պիտի



ըլլայ ... 2004ին Աթէնքի մէջ տեղի ունենալիք Ողիմպիական խաղերուն պաշտօնական երգը:

Ծագումով յոյն երգիչը, որուն բուն անունն է Կիրոկիրոս Քիրիաքոս Փանայիու, ըսած է, թէ ինք շատ ուրախ եւ հպարտ պիտի ըլլայ, եթէ իր երգը ընտրուի իբրեւ Ողիմպիական խաղերուն պաշտօնական երգը:

□

ՃԱՐՃԱՊԱՏԿԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԺԱՊԱՒԷՆՆԵՐ



մէջ կարելի է դիտել մանուկներու յատուկ հետեւեալ ժապաւէնները:

...

«ՓԻՅԵՐ ՓԷՆ».-

Բազմաթիւ մանուկներու նախասիրած հերոսը վերադարձած է ժապաւէններու աշխարհը, այս անգամ դեր ստանձնելով կենդանի գձանկարի մը մէջ: Նշանաւոր Ուոլթ Տիվնի ընկերութիւնը հրապարակած է Փիթըր Փէնի նոր տարբերակ մը, որ ձեւով մը շարունակութիւնն է նախորդին:

Ճէյն Կ'առեւանգուի չար Քէփթըն Բուքի կողմէ, որ միշտ կ'ուկէ բանտարկել մանուկները, երեւակայութիւնը եւ ապատութիւնը սիրող Փիթըր Փէնը: Այս վերջինը իր ընկերակից Թիմբըր Պէլին եւ կորսուած տղոց խումբին հետ անդադար կռիւ կը մղէ Քէփթըն Բուքի դէմ:

Ան այս ժապաւէնին մէջ պիտի փորձէ ամէն գնով ապատել Ճէյնը:


...

«ՍՔՈՒՊԻ ՏՈՒ».-


Վստահաբար ձեզմէ շատեր կը հետեւին կենդանի գձանկարներու նշանաւոր «Սքուպի Տու» շարքին: Բայց արդեօք ի՞նչ պիտի ըսէք, եթէ առիթ ունենաք դիտելու ձեր հերոսներուն նուիրուած ժապաւէն մը: Նշանաւոր շնիկը եւ իր ընկերները այս ժապաւէնին մէջ եւս պիտի փորձեն խորհրդաւոր գաղտնիքներ լուծել:

□







1) Կետերը իրարու միացուր 1 – 43 գտնելու համար, թե Պլտիկ-մպտիկ ի՞նչ կը փնտռէ:



4) Պլտիկ-մպտիկ դէպի որ կողմ կը դարձնէ Բ անիւը:



2) Կրնա՞ս օգնել Պլտիկ-մպտիկին գտնելու համար իր ինքնաշարժին դուռը:



5) Ներկէ հետեւելով նշաններուն, գտնելու համար պահուած պատկերները: + = դեղին, = կանանչ:

Ժամանցի պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի ճարաթ, 17 Օգոստոս 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԱՏՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յէն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցանքը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 5

1.- Ռըր կը գտնուին Նիակարա ջրվէժները:-----

2.- Ռըր կը գտնուի օճառի թանգարանը:-----

3.- Ռըր կը գտնուի Փիլպալի աշտարակը:-----

Անուն – Ասկանուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 4Ի ԾԱՌՈՂԸ

Բարցարան թիւ 4ի շահողը Նանար Սարգսեան (Յ տարեկան «Թռչնոց Բոյն»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցանքը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, Ծաղկոյեան կեդրոն:



ՊՏՈՅՏ

ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՄԵՐ ԱՐՇԱԽՆԵՐԸ

«Պլստիկ-Սպտիկ»-ի նախորդ թիվին մէջ այցելեցինք յատկապէս հնագիտական բնոյթ ունեցող թանգարաններ: Իսկ տարբեր հետաքրքրութիւններ ունեցողներուն համար...

...

- Լէ ՄԵՐՎԷՅ ՏԸ ԼԱ ՄԵՐ (ԾՈՎՈՒ ԲՐԱՃԱԼԻՔՆԵՐԸ)

Յատկապէս ճովային աշխարհի սիրահարներուն համար է այս թանգարանը: Այս ճովային մնայուն ցուցադրութիւնը կը գտնուի ժողովարանի մէջ: Բոն ցուցադրուած են աւելի քան 3000 խեցիներ: Իսկ մեծ արուարիումներուն մէջ կրնանք հանդիպիլ

ծուկի եւ պատենաւոր կենդանիներու աւելի քան 630 տեսակներու: Այցելութենէն ետք, յաւելեալ տեղեկութիւններ ունենալու համար, կարելի է դիտել ճովային աշխարհի մասին յատուկ վաւերագրական ժապաւէն մը:

ՎԱՅՐ - Ժողովարանի մէջ, Լա Սաժէս դարպասին մօտ: ԲԵՌԱՋԱՅՆ

01/891548, 03/626069
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ - Յուլիս - Օգոստոս ամիսներուն՝ երկուշաբթիէն Ուրբաթ, ժամը 8:30-13:30, Բոկտեմբերէն Յունիս ամիսներուն՝ երկուշաբթիէն Ուրբաթ օրերը, ժա-

մը՝ 8:30-13:30, Ճարաթ եւ կիրակի օրերը՝ ժամը 15:00-19:00:

...

- ՕՃԱՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ



Սայտայի մէջ գտնուած օճառի այս հին գործարանը վերածուած է օճառի թանգարանի մը: Ան կը պատմէ Միջին Արեւելքի մէջ օճառին պատմութիւնը եւ կը ներկայացնէ ձեռքով պատրաստութեան անոր տարբեր հանգրուանները: Բոն ցուցադրուած են նաեւ օճառի պատրաստութեան համար գործածուած մեծ անօթները, հին գործարանին մէջ գտնուած տարբեր տեսակի առարկաներ: Կարելի է նաեւ ճանօթանալ օճառը չորցնելու եւ կտրելու կերպերով:

րուն: ՎԱՅՐ - Բարէթ Աուտի, էլ Մուրթան փողոց, Սայտա

ԲԵՌԱՋԱՅՆ - 07/733353

...

- ՔԱԼ՝ԱԹ ԺՏՈՒՏՆԱ (ՄԵՐ ՊԱՊԵՐՈՒՆ ԳԻՒՂԸ)

Թրիփոլիի ծամբուն վրայ, Մըսայաահա բերդին մօտ, Պաթրունի մէջ գտնուող այս «գիւղը» մեզի կը ներկայացնէ կեանքը լիբանանեան գիւղերուն մէջ, երբ տակաւին ելեկտրականութիւն չկար, եւ չկային օդը ապականող մեքենաներ: Բնութիւնը եւ պարզ կեանքը սիրողները պիտի կարենան մասնակցիլ գիւղին առօրեայ կեանքի աշխատանքներուն, ինչպէս՝ ջրհորէն ջուր քաշել, հաց պատրաստել, եւ այլն... Կարելի է նոյնիսկ գիշերը անցընել գիւղին մէջ:

ԲԵՌԱՋԱՅՆ - 03/311770

...

Բոլոր այս վայրերուն կողքին, չմոռնանք նաեւ Լիբանանի հարուստ եւ գեղեցիկ բնութիւնը: Բաճելի պտոյտներ կը մաղթենք ձեզի՝ ամառնային երկար շաբաթավերջերուն համար: □

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԵՐԸ ՁԵՐ ԸԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՆ ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.

Տարեդարձի, անուանակոչութեան, նշանախօսութեան եւ ամուսնութեան տարեդարձի:

Անձին անունով, մականունով եւ ընտանեկան նկարներով, կէս ժամոց VIDEO CLIP-ներ

ԲՈԼՈՐ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԶԵՐ
VIDEO-ԵՐԻՉՆԵՐԸ

ԿՐԱՋԱՆԱԳՐԵՆՔ CD-Ի ՎՐԱՅ

Փոքրերու յատուկ մանկական յայտագիր, (bal d'enfants), երգեր եւ պարեր video-ի կամ CD-ի վրայ արձանագրուած:

ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆ ՀԱՍՏ.,

Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի հրապարակ, հեռ. 01-261696 եւ 03-250518:

ՃԱՄԲՈՐՈՂՈՒԹԻՒՆ

Ճարունակուած՝ Ա. Էջէն

Բար մեր մտքէն կ'անցընենք օր մը այցելել այդ երկիրները եւ մօտէն ճանօթանալ գիրքին մէջ մեր սորվածներուն: Այդ երկիրներուն մաս կը կապուի նաեւ հայաստանը: Բարեբախտաբար Սփիւքի մէջ հայ ժողովուրդի վաւակներուն առիթ տրուած է, որ դասաւանդուի հայոց պատմութիւն եւ հայաստանի աշխարհագրութիւն: Մենք այդ գիրքերուն մէջ կը ճանօթանանք մեր ժողովուրդի հերոսներուն, հայաստանի գետերուն, լիճերուն, լեռներուն ու քաղաքներուն: Այսինքն մեզի կը մնայ միայն այցելել հայրենիք եւ աչքով տեսնել գիրքին մէջ մեր սորվածները:

Դուք ալ ինձի պէս դրամ խնայեցէք (պակասած ալ խնայեցէք ձեր ճողքէն), եւ լաւ կ'ըլլայ, որ առաջին անգամ այցելէք հայաստան, ուր կը գտնուին Արարատը, Էջմիածինը, Խոր Վիրապը, Բիրականի աստղադիտարանը, կենդանաբանական պարտէզը, Ջրաշխարհը եւ հայրենի հողը, ջուրը, պտուղները եւ հայ ժողովուրդին ձեռակերտները: □



Դ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 550 ՍԿԱՌԻՏՆԵՐ՝ ԲԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՆՔԻՆ ՏԱԿ

Աշխարհի տարբեր երկիրներէ համախմբուած շուրջ 550 արի-արենուշներ 26 Յոպիսէն 4 Օգոստոս բանակեցան Բայաստանի երկիրներին տակ, Բիւրականի մէջ: Բամահ.Մ.Ը.Մ.ական 7րդ ընդհանուր բանակումին մասնակցողները ունեցան շատ ծոխ յայտագիր, բանակավայրէն ներս թէ դուրս: Բանակումին նշանաբանն էր՝ «Տքնաջան աշխատանք՝ հպօր Բայաստան»:

Տարբեր խումբերու բաժնուած սկաուտները այցելեցին Բայաստանի տարբեր շրջանները: Անոնք ծանօթացան Գառնիին, Գեղարդին, պտտեցան Սեւանի, Սարդարապատի, Ծիծեռնակաբերդի, Էջմիածինի

եւ Երեւանի մէջ: Անշուշտ անոնք չմոռցան այցելել Բիւրականի աստղադիտարանը եւ հոնկէ դիտելու Բայաստանի աստղերը:

Իսկ բանակումին ամէնէն հետաքրքրական պահերէն մէկը անկասկած Արագած լեռը բարձրանալն էր: Սկաուտական տոկունութեամբ եւ քառագագաթ Արագածին բարձունքներուն հասնելու վճռակամութեամբ 305 սկաուտներ հասան Բայաստանի ամենաբարձր լեռան չորս գագաթներէն մէկը:

Այս էջով, նկարներու եւ գրութիւններու ծամբով խօսքը կու տանք իրենց՝ սկաուտներուն:

ԲԱՅՐԵՆԻ ՅՈՒՇԵՐ

Ճատ ուրախ եմ, որ այս ամառ բախտը ունեցայ իբրեւ Բ.Մ.Ը.Մ.ական Բայաստան ծամբորդելու:

Երբ ոտքս դրի հայրենի հողին վրայ, բոլորովին տարբեր պզայի, կուրծքս լեցուեցաւ հպարտութեամբ եւ սկսայ աւելի ինքնավստահ քալել:

Ծանօթացայ մեծ թիւով երեւանցիներու եւ յուշանուէրներ փոխանակեցինք: Իսկ երբ Արցախ այցելեցինք, շատ աւելի տարբեր պզայումներ ապրեցայ, երբ մօտէն ծանօթացայ անվախ արցախցիին: Ուրախութիւնս կրկնապատկուեցաւ, որովհետեւ չորս տարեկանիս, երբ առաջին անգամ Բայաստան այցելեցի ազատագրական պատերազմին պատճառով Ղարաբաղ չկրցայ այցելել:

Միակ տխրութիւնս այն է, որ տարիքի պատճառով մեկի չարտօնեցին Արագած լեռը մագլցիլ: Բայց ես որոշած եմ, օր մը, Անպայման, պիտի մագլցիմ:

*ՓԱԹԻԼ ԹԵՐԶԵԱՆ
(14 տարեկան)*



Բ.Մ.Ը.Մ.ականները կը բարձրանան Արագածի գագաթը...

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ


15 օր Բայաստանի մէջ անցընելով պզայի, որ ժամանակի ընթացքին լսածներս եւ սորվածներս իրական են: Գոյութիւն ունին Խոր Վիրապը, Էջմիածինը, Սարդարապատը... եւ ամէնէն կարեւորը այն է, որ այս բոլորը կը պատկանին մեկի՝ հայերուս: Բնաւ չէինք երեւակայեր, որ Երեւանի հրապարակը այդքան տպաւորիչ է, իսկ երբ տեսայ Արարատը, ուլեցի անոր փաթօնիլ:

*Վարագ Սիսեռեան
(13 տարեկան)*

...

Վերջապէս բախտը ունեցայ իրականացնելու երազներես մէկը՝ այցելելով հայրենիքս: Բամահ.Մ.Ը.Մ.ական բանակումին օրերը անցան շատ արագ, ու հասաւ վերջին օրը: Այո, կարօտցած էինք մեր ընտանիքները, սակայն միեւնոյն ատեն չէինք ուլեր հեռանալ մեր հայրենիքէն եւ նոր ընկերներէն: Մեր արցունքները կը բացատրէին ամէն ինչ...

*ԿԱՍԻԱ ԳԱՐԱՄԱՆՈՒԿԵԱՆ
(15 տարեկան)*



...եւ կը տողանցեն Երեւանի փողոցներուն մէջ:

